ՀՀ Արդարադատության նախարար
պարոն Հ. Թովմասյանին

Ձեզ եմ ներկայացնում Ճամբարակ համայնքի 2-[illegible] ավագանու որոշումները թվով 6 թերթով:

Ճամբարակ համայնքի ղեկավար [signature] [illegible]. Գրիգորյան

09.12.2011թ.

«12» 12 2011թ.
Մուտք № 7-908

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՄԻՐԱՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Շամիրամ համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

2-ը դեկտեմբերի 2011թ. N 11

## ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը Շամիրամ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել համայնքի տարածքում 2012թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ ՝ մտնում ստորագրման պահից:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Ա. Թեմուրյան

Ռ. Շարոյան

Տ. Քյալաշյան

Ռ. Աղեյան

Պ. Հասանյան

Շամիրամ համայնքի ղեկավար՝ Մ. Քրոյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ
գյուղական համայնքի ավագանու
2011 թ. դեկտեմբերի 2 -ի N 11 որոշման

# ՇԱՄԻՐԱՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1 500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1 500 դրամ:

Բերքառատի համայնքի ղեկավար՝ Մ.Բրոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՄԻՐԱՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Շամիրամ համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

2-ը դեկտեմբերի 2011թ. N 12

## ՇԱՄԻՐԱՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով Շամիրամ գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Շամիրամ համայնքի ղեկավարի 2012 թվականի ամսեկան դրույքաչափը սահմանել՝ 177.000 (մեկ հարյուր քանհինգ հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ ՝ մտնում ստորագրման պահից:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Ա. Թեմուրյան

Ռ. Շարոյան

Տ. Քյալաշյան

Ռ. Աղեյան

Պ. Հասանյան

Շամիրամ համայնքի ղեկավար՝ Մ.Բրոյան

ՀՀ ... ՇԱՄԻՐԱՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ... 05003012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՄԻՐԱՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Շամիրամ համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

2-ը դեկտեմբերի 2011թ. N 13

## ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով Շամիրամ համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Շամիրամ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ ՝ մտնում ստորագրման պահից:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Ա. Թեմուրյան

Ռ. Շարոյան

Տ. Քյալաշյան

Ռ. Աղեյան

Պ. Հասանյան

Շամիրամ համայնքի ղեկավար՝ Մ.Բրոյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ
գյուղական համայնքի ավագանու
2011թ դեկտեմբեր 2 -ի N10 որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 177.000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 90.000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 110.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 100.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 100.000 |
| Սպասարկող անձնակազմ | | |
| Ջրերի հսկիչ | 1 | 45.000 |
| Ակումբի վարիչ | 1 | 32.500 |
| Հավաքարար | 1 | 32.500 |
| Անասնաբույժ /պատվիրակված/ | 1 | 40.000 |
| Ընդամենը | 9 | 617.000 |

Համայնքի ղեկավար Մ.Բրոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՄԻՐԱՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Շամիրամ համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

2-ը դեկտեմբերի 2011թ. N 14

## ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և ղեկավարվելով ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով ու «Բյուջետային համակարգի մասին»ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով Շամիրամ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Շամիրամ համայնքի 2012թ. բյուջեն՝ համաձայն կից հավելված 1-ով:
2. Սույն որոշումն ուժի մեջ ՝ մտնում ստորագրման պահից:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Ա. Թեմուրյան

Ռ. Շարոյան

Տ. Քյալաշյան

Ռ. Աղեյան

Պ. Համենյան

Շամիրամ համայնքի ղեկավար՝ Մ.Բրոյան